

գործածուէին: Քուչակեան կոչուած տաղաշարքին մէջ քառեակ մը կ'ըսէ.

Այրիչում խալի՝ ոսկեթել գոշակն ի վրան:

Այսինքն մետաքսեայ գորգ՝ վրան ալ ոսկեթել զիպակով շինուած անկողին: Հոն կան ուրիշ վկայութիւններ ալ տարբեր գորգերու մասին, որոնք անմեկնելի կը մնան ինծի, օրինակ «Քիւրմախուլ խալի»:

Մետաքսեայ գորգերը անտարակոյս կը կապուէին ճիշդ բուրդ գորգերու նման:

ԲՈՒՐԳ

Բուրդն ալ բոլոր նախնական նիւթերուն պէս իր պատրաստութեան մէջ չեմ կարծեր որ հնադարեան կերպէն շատ բան փոխած ըլլայ: Ինչպէս որ բազմաթիւ դարեր առաջ հայ բուրդ պատրաստողը կը ներկէր իր բուրդը գորգ գործելու կամ տարբեր հիւսուածքներու համար, այդպէս ալ կը շարունակուի մեր օրերուն:

Մեր ձեռագիրներուն մէջ քիչ բան կայ բուրդ եւ այլն ներկելու մասին եւ զժրախտաբար այդ քիչերն ալ կը մնան բոլորովին չուսումնասիրուած:

Իսկ մեր օրերուն հայ արհեստագործութեամբ քիչեր հետաքրքրուած են, որով շատ ցանցաւ վկայութիւններ միայն ունինք որոշ դաղափար մը կազմելու համար բրդագործութեան եւ յարակից արհեստներու մասին:

Վկայուեցաւ որ այսօրուան, այսինքն գոնէ մեր ժամանակակից հայ զիւղացիին յատուկ է գորգ հիւսելը կամ բուրդ պատրաստելը: Այդպէս է Բուլանըխի մէջ, «Գիւղացի կնոջ ձեռագործները կը պատրաստուին գլխաւորաբար այծի մազի, քֆքիկի եւ բրդի մանածնեից: Մանած կը պատրաստուի քարմանով եւ օգնական առնուտիկով, բուրդը մանելուց յետոյ մատներու վրայ արած փաթոյթը՝ որ կը կոչուի քաքուլ, հետզհետէ մեծացնելով կը շինեն կծիկը»⁽¹⁵⁾:

Աւելի կատարեալ թանկագին տեղեկութիւններ կու տայ Ղարաբաղցոց մասին Կ. Կ. Մէլիք-Շահնազարեանց: «Ղարաբաղի զիւղերում եւ թէ Շուշի քաղաքում սովորութիւն կար եւ այժմ էլ ընդհանրացած է, որ հարեւանները իրենց գործը շուտ առաջ տանելու համար, որոշ օր հաւաքում են իրենց հարեւանների աղջկերանց, հարսներին եւ միասին աշխատում են թէ տանր եւ թէ դրսում՝ դաշտում: Այդ առում է միջի անել — այն է հաւաքական ուժով փոխադարձ միմեանց օգնել»:

(15) Բուլանըխ կամ Հարք Գուլու, Բեննէի: Աղբ. Հանդ., Ե զերբ, 1899, թիւ 1, էջ 68-9: